

ՏԵՂԵԿ ԱՏՈՒՌԻԲԻԻՆ ԵՎ ԵՂԵՑ ԱՄԻՆՈՒԲԵԱՆ

.....

Մեծայարգ անդամներ,

Կիրակի, 7 Սեպտեմբեր 1967, յիշատակութեան արժանի Օր մը հանդիսացաւ չայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ համայնքիս համար: Այդ Օրը Մխական Ժողովս որոշեց զնել Մոնթրէալի ապագայ չայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, Ազգային Վարժարանի եւ Մշակութային Կեդրոնի համար Մխական Խորհուրդիս թելադրած կոկիկ հողամասը, որ կը գտնուի Հանրի Պուրասս եւ Համոն փողոցներու անկիւնը :

Մխական Խորհուրդս ընդառաջելով 7 Սեպտեմբերի, 1967, Ընդհանուր Անդամական Ժողովին որոշման, անմիջապէս գործի լծուեցաւ կատարելու համար հողին զնման վերջնական կարգադրութիւնները : Այս միջոցին Խորհուրդս յարժար դատեց նաեւ վերակազմել Եկեղեցաշինութեան Յանձնախումբ մը եւ այս առնչութեամբ հանդիպում մը ունենալու նպատակաւ հրաւիրեց քանի մը ազգայիններ: Բայց հակառակ Մխական Խորհուրդիս քանիցս թափած ջանքերուն, կարելի չեղաւ Եկեղեցաշինութեան Յանձնախումբ մը կազմել: Ուստի, Մխական Խորհուրդս հարկադրուեցաւ շարունակել եկեղեցաշինութեան խիստ կարեւոր գործերը, նկատի ունենալով որ քանի մը ամիսէն, յառաջիկայ փետրուարին ընթացքին տեղի պիտի ունենայ Տարեկան Ընդհանուր Անդամական Ժողով ուր պիտի ընտրուի նաեւ Եկեղեցաշինութեան Յանձնախումբ մը:

Արդ, Մխական Խորհուրդս իր 11 Հոկտեմբերի, 1967, նիստին կ, որոշէ շարունակել եկեղեցաշինութեան աշխատանքները: Այս որոշման համաձայն, Մխական Խորհուրդիս ղեկանը՝ ատենապետ Պր. Յ. Բէսթէքեան, ատենադպիր Պր. Ա. Մարտիկեան եւ փոխ ատենապետ եւ զանձապահ Պր. Ժ. Տէրվիշեան, 14 Նոյեմբեր 1967ին, ստորագրեցին հողի զնման վերջնական պաշտօնական թուղթերը հետեւեալ պայմաններով,

Հողի տարածութիւն 15,000 քառակուսի ոտք 3,25 տոլարէն, ընդհանուր գումար՝ 48,750 տոլար որմէ կանխիկ վճարուեցաւ 31,000 տոլար: Մնացած 17,750 տոլարին 15,750 տոլարը 7 առ հարիւր տոկոսով համայնքս պարտական կ, ըլլայ Մոնթրէալի քաղաքին, որ վճարելի է 9 անգամէն, տարեկան երկու վճարումներով, իւրաքանչիւր վճարում 1,750 տոլար առաւել տոկոս որոնք վճարելի են ամէն տարի 30 Ապրիլին եւ 31 Հոկտեմբերին: Մնացած 2,000 տոլարը 7 առ հարիւր տոկոսով համայնքս պարտական կ, ըլլայ հողը ծախողին / Պր. Մաքս Մէյմէնի / եւ վճարելի յաջորդ մէկ տարուան ընթացքին տարեկան 2 վճարումներով Մայիս 15 եւ Նոյեմբեր 15, 1968ին :

Որքան ալ 7 Սեպտեմբեր 1967 Ընդհանուր Անդամական Ժողովիս ձեզի կար դացուած էր Մոնթրէալի Քաղաքապետարանին այս հողին համար ունեցած կանոնադրութիւնը, Մխական Խորհուրդս անգամ մը եւս ձեր ուշադրութեան կը յանձնէ այս կանոնադրութեան գլխաւոր պայմանները:

- Կանոնադրութեան յօդուած 4ին համաձայն,
- Ա. — ամենաուշ մինչեւ 9 Նոյեմբեր 1968 պէտք է ղեմենք Քաղաքապետարանի շինութեան արտօնագիր մը ստանալու համար:
- Բ. — արտօնագիրը ստացած թուականնէս 90 Օր վերջ պէտք է սկսինք շինութեան:
- Գ. — արտօնագիրը ստացած թուականնէս 18 ամիս յետոյ պէտք է շինութիւնը ամբողջովին աւարտած ըլլայ:
- Դ. — Եթէ հողը ամբողջովին վճարուած է, արտօնագիրը ստացած թուականնէս 18 ամիս յետոյ պէտք է առնուազն շինութեան 25 առ հարիւրը լրացած ըլլայ:

Ուրեմն Յարգելի Անդամներ, ի մտի ունենալով այս բոլորը, Ծրական Խորհուրդը ս որոշեց դիմել ազգային բարերար ֆիլանտրոպիայի ճարտարապետական եւ ճարտարագիտական հաստատութեան ընդհանուր տնօրէն Տիար Հեր Գրլանեանի, Մոնթրէալի ապագայ եկեղեցւոյ շինութեան նախագիծերու պատրաստութեան համար: Պր. Հերի Գրլանեան նկատելով այս առաջարկը որպէս ազգային պարտականութիւն, սիրայօժար եւ ձիւրաբար ստանձնեց սոյն գործը, ինչ որ համայնքիս համար այս պատրաստութիւնները խիստ կարեւոր գումարներու կը կարօտէին:

Ծրական Խորհուրդը սրտի խորին շնորհակալութեամբ կ'արձանագրէ Պր. Հերի Գրլանեանի այս սրտաբուխ եւ ազգօգուտ նուիրատուութիւնը:

Ծրական Խորհուրդը գիտցաւ իր ուսերուն վրայ ծանրացող լուրջ բեռին արժէքն ու կարեւորութիւնը եւ ահա անյամ մը եւս ձեր աջակցութեամբ եւ ձեր նիւթական Օգնութիւններով ան յաջողութեամբ պսակեց իր ձեռնարկած դրամահաւաքը: Երկու շաբթուայ ընթացքին մենք յաջողեցանք հայթայթել 12,000 տոլար որուն համար պարտք կը զգանք մեր խորին շնորհակալութիւնները յայտնել մեր քոյր միութիւններու, յանձնախումբերու եւ մեր բարեպաշտ ու հաւատացեալ ժողովուրդին:

Եւ ահա այսօր, յարգելի անդամներ, գտնուելով Եկեղեցաշինութեան Յանձնախումբի ընտրութեան սեմին, Ծրական Խորհուրդը կուզայ ներկայացնել հետեւեալ նախապատրաստական այս աշխատանքները: Ծրական Խորհուրդը աջակցութիւնն ունենալով Պր. Յ. Կարապետեանի եւ Պր. Պ. Քիւլիքի-որոնց կը յայտնենք մեր շնորհակալութիւնները՝ բծախնդրօրէն աշխատելով պատրաստած, քննած եւ յարմար դահելով զաղուծիս բոլոր կարիքներուն, կը յանձնէ իրեն յաջորդող Ծրական Խորհուրդին եւ կազմուելիք Եկեղեցաշինութեան Յանձնախումբի ուշադրութեան:

Մենք համոզուած եւ վստահ ենք թէ շատ մօտ ապագային, Մոնթրէալի Հայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ համայնքիս աշխատանքները յաջողութեան դահնիով պիտի պսակուին, պիտի շարունակենք մեր նախահայրերուն ուղիով քանի որ անոնք ապրել եւ կառուցել են մեզի համար. մենք ալ պիտի կառուցանենք անոնց նման կաթողիկէ գմբէթով Հայ Եկեղեցին, Մշակութային Կեդրոնը եւ Հայ Դպրոցը քանի որ մենք ալ կ'ապրինք մեր ապագայ սերունդին համար:

Փառք ու պատիւ բոլոր արժանաւորաց :

ՄԻԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ատե նաղպիր

Ալպէր ՄԱՐՏԻԿԵԱՆ